

**ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ա. Պ. ԲԱՂԻՆՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Գույքի ապահովագրությունը Ապահովագրության մասին ՀՀ օրենքով դասվում է ոչ կյանքի ապահովագրության տեսակներին: Գույքի ապահովագրությունը ՀՀ-ում այդ ոլորտի ամենատարածված տեսակներից է և հիմնականում կիրառվում է բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկի դիմաց գրավադրվող գույքի ապահովագրության համար: Գույքի ապահովագրություն ձեռք բերելու համար կնքվում է ապահովագրության համապատասխան պայմանագիր ապահովագրողի՝ ապահովագրական ընկերության, և ապահովադրի՝ ապահովագրվող գույքի սեփականատիրոջ միջև: Որպես պայմանագրի կնքման գործարքի իրականացման հիմք՝ ապահովադրին տրվում է ապահովագրության վկայագիր, որը պետք է բովանդակի՝

1. փաստաթղթի անվանումը, սերիան և համարը,
2. ապահովագրողի լրիվ անվանումը, պետական գրանցման և լիցենզավորման տվյալները, գտնվելու վայրը՝ փոստային հասցեն, կապի միջոցները, բանկային և այլ վավերապայմաններ,
3. ապահովադրի մասին տվյալներ՝
 - 3.1. իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը՝ փոստային հասցեն, կապի միջոցները, բանկային և այլ վավերապայմաններ,
 - 3.2. ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանուն, անձնագրային տվյալները, փոստային հասցեն, կապի միջոցները և այլն,
4. ապահովագրության օբյեկտի լրիվ անվանումը, գտնվելու վայրը՝ փոստային հասցեն, եթե այդպիսիք կան,
5. ապահովագրական գումարի չափը՝ ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը,
6. ապահովագրության օբյեկտի գնահատված արժեքը,
7. հավանական ապահովագրական ռիսկի անվանումը,
8. ապահովագրավճարի չափը, վճարման կարգն ու ժամկետները,

9. ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի առաջացման մասին տեղեկություններն ապահովագրողին հայտնելու պայմանները,

10. պայմանագրի գործողության ժամկետը, դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվը,

11. չհատուցվող գումարի տեսակը և չափը, եթե այդպիսին կան,

12. ապահովագրական հատուցումների կարգը և պայմանները, ինչպես նաև հնարավոր մերժման դեպքերը,

13. իրականացվող ապահովագրության կանոնները կամ նրանց պատճենը,

14. կողմերի համաձայնությամբ այլ դրույթներ,

15. վեճերի լուծման, ինչպես նաև վկայագրի փոփոխման, լրացման և լուծման կարգը,

16. օրենսդրությամբ սահմանված այլ դրույթներ:

Ապահովագրության վկայագրին կից տրվում են նաև ապահովագրության կանոնները, որը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապահովագրության կանոններում մանրամասն նշվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, չհատուցվող դեպքերը, պայմանագրի դադարեցման և այլ պայմաններ:

Այս հոդվածում կնկարագրենք ՀՀ-ում գործող ապահովագրական շուկայի առաջատար ընկերություններից մեկի՝ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի գույքի ապահովագրության պայմաններից որոշակի դրույթներ:

1. Ընդհանուր դրույթներ

Գույքի ապահովագրության պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

«Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից իրականացվող գույքի ապահովագրությունը ներառվում է օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» դասերի մեջ:

Օրենքի, այլ իրավական ակտերի և պայմանների հիման վրա ապահովագրողը կնքում է գույքի ապահովագրության պայմանագիր իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձանց հետ:

Պայմանագրով ապահովագրողը պարտավորվում է սահմանված ապահովագրավճարի դիմաց պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների ի հայտ գալու դեպքում փոխհատուցել ապահովադրին կամ շահառուին ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի վերականգնման հետ կապված ծախսերը ապահովագրական գումարի սահմաններում:

Համաձայն այս պայմանների՝ պատճառված վնաս ասելով պետք է հասկանալ ապահովագրական պատահարի արդյունքում գույքին հասված իրական վնասը, նաև այն ծախսերը, որոնք ապահովադիրը կրել է ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար:

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել միայն հոգուտ այն անձի, ով օրենքի, իրավական այլ ակտերի կամ պայմանագրի հիման վրա ունի այդ գույքի պահպանման շահ: Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի նկատմամբ պահպանման շահի բացակայության դեպքում կնքված պայմանագիրն անվավեր է:

Պայմանների բոլոր դրույթները, որոնք առընչվում են ապահովադրին, հավասարապես տարածվում են նաև շահառուի վրա, եթե դա չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

Պայմանագրի կնքումը շահառուի օգտին չի ազատում ապահովադրին պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե պայմանագրով նախատեսված չէ, որ ապահովադրի պարտականությունները պետք է կատարի շահառուն:

2. Ապահովագրության օբյեկտը

Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ապահովադրի՝ գույքի տնօրինումը, տիրապետումը կամ օգտագործումը ներառող գույքային շահերը, որոնք կապված են պատահարի հետևանքով գույքի վնասման, ոչնչացման կամ կորստի հետ:

Սույն պայմանների հիման վրա կնքված պայմանագրի համաձայն՝ ապահովագրված կարող են լինել՝

2.1. անշարժ գույքն ամբողջությամբ՝ շենքեր, շինություններ, առանձնատներ, ինչպես նաև նրանց առանձին ճարտարապետական և կոնստրուկտորական մասեր և տարրեր,

2.2. շարժական գույքը՝ սարքավորումներ, տեխնիկա, ուժային և այլ մեքենաներ, փոխանցող հարմարանքներ, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հումք, նյութեր և այլն:

Սույն պայմաններին համաձայն ապահովագրության ենթակա չէ, գույքը, որը գտնվում է՝

2.3. վթարային շինությունում, որտեղ բնակվելն արգելված է համապատասխան մարմինների կողմից,

2.4. համապատասխան լիազորված մարմնի կողմից որպես սողանքի, փլուզման կամ այլ տարերային աղետների գոտի հաստատված տարածքում:

Համաձայն պայմանների՝ ապահովագրությունը չի տարածվում նաև՝

2.5. ջրային ռեսուրսների, հողի, բնահողի և ընդերքից չհանված օգտակար հանածոների վրա,

2.6. բույսերի, կենդանիների, միկրոօրգանիզմների վրա,

2.7. օֆշորային կառույցների վրա,

2.8. պայթուցիկ նյութերի և զինամթերքի վրա,

2.9. աղբանոցների վրա,

2.10. ատոմային վառելիքի վառվելու ցիկլում օգտագործվող սարքավորումների և այլ գույքի վրա,

2.11. պետական իրավասու մարմինների կողմից վթարային վիճակում ճանաչված շենքի և շինության, ինչպես նաև այդպիսի շենքում տեղակայված գույքի վրա:

3. Ապահովագրական ռիսկեր, պատահարներ

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի Գույքի ապահովագրության պայմաններով գույքն ապահովագրվում է հետևյալ ռիսկերից՝

3.1. ապահովագրություն հրդեհից, կայծակնահարությունից, պայթյունից, թռչող սարքերի վայր ընկնելուց կամ դրանց հետ բախվելուց,

3.2. ապահովագրություն փոթորկից և կարկուտից,

3.3. ապահովագրություն այլ տարերային աղետներից՝ ջրհեղեղից, հրաբխի ժայթքումից, երկրաշարժից, սողանքներից, փլուզումներից, ձյան զանգվածակույտներից և այլն,

3.4. ապահովագրություն ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և համանման այլ համակարգերի ջրի պատճառած վնասներից,

3.5. ապահովագրություն ցայտաջրմուղային համակարգերի և ջրաքաշ խողովակների ջրի պատճառած վնասներից,

3.6. ապահովագրություն կոտրանքի միջոցով գողությունից, կողոպուտից, ավազակությունից,

3.7. ապահովագրություն ապահովագրված գույքի վնասմանն ուղղված երրորդ անձանց կանխամտածված գործողություններից,

3.8. ապահովագրություն տրանսպորտային միջոցների բախումից, ծխի ազդեցությունից և ձայնային հարվածից,

3.9. ապահովագրություն ապակիների, հայելիների և ցուցափեղկերի կոտրումից,

3.10. ապահովագրություն արտաքին ազդեցության այլ ռիսկերից:

4. Պատահարներ, որոնց ի հայտ գալուց ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց

Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահարներ չեն համարվում իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են՝

4.1. պատերազմի, զինված ներխուժման, թշնաբար տրամադրված պետությունների գործողության անկախ պատերազմ հայտարարված լինելու փաստից, քաղաքացիական պատերազմի, ապստամբությունների, հեղափոխության կամ խռովության հետ,

4.2. գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ,

4.3. ահաբեկչության, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ,

4.4. գործադուլների, լոկաուտների կամ մասսայական անկարգությունների հետ, եթե պայմանագրով այլ բան հատուկ նախատեսված չէ,

4.5. ապահովագրի կամ շահառուի, նրանց աշխատողների, նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև տվյալ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունք ունեցող անձանց դիտավորության հետ: Տվյալ անձը համարվում է դիտավորյալ գործած, եթե նա գիտակցել է իր գործողությունների

կամ անգործության վտանգավորությունը, կանխատեսել է ապահովագրական պատահարի ի հայտ գալը և գիտակցաբար թույլ է տվել դրա տեղի ունենալը կամ վերաբերվել է դրան անտարբեր:

4.6. Ցանկացած տիպի աղտոտվածության կամ միջուկային վարակման, քիմիական կամ այլ բիոլոգիական նյութերի և հումքերի ներգործության հետ,

4.7. ատոմային էներգիայի, ճառագայթման կամ ճառագայթային վարակման ազդեցության հետ,

4.8. նախագծման, կառուցման, մոնտաժի սխալների, անորակ աշխատանքի կատարման կամ նյութերի դեֆեկտների հետ:

5. Ապահովագրված ծախսեր

5.1. Ի լրումն ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի հատուցմանը՝ ապահովագրողը փոխհատուցում է նաև խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք իրականացրել է ապահովադիրը՝ նպատակ ունենալով կրճատել այն վնասները, որոնք ենթակա են հատուցման ապահովագրողի կողմից, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ իրականացվել են Ապահովագրողի կարգադրությամբ:

5.2. Եթե ուղղակիորեն նշված է պայմանագրում, ապա ապահովագրողը կհատուցի նաև վնասի վայրի մաքրման ծախսերը, ապահովագրված գույքի մնացած մասերի տեղափոխման ծախսերը:

5.3. Ծախսեր, որոնք կատարվել են ապահովագրված գույքը ապահովագրական պատահարից անմիջապես առաջ գտնվելու վիճակին բերելու համար:

5.4. Փաստաթղթերով թղթապանակների վերականգնման կամ կրկնակի թողարկման, նախագծերի, գործարար գրքերի, քարտերի, գծագրերի կամ այլ փաստաթղթավորված տեղեկատվության վրա կատարված ծախսերը: Եթե տեղեկատվության վերականգնում չի պայանջվում, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տեղեկատվության կրիչների արժեքը:

5.5. Այլ ծախսեր, որոնք նախատեսված են կանոններով:

6. Գույքի ապահովագրության սակագին

Ապահովագրության սակագինը գործակից է տոկոսային հարաբերակցությամբ, որը կիրառվում է ապահովագրավճարը հաշվարկելու համար: Ապահովագրավճարը ստանալու համար սակագինը բազմապատկվում է ապահովագրական գումարով: ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններում գույքի ապահովագրության համար կիրառվող միջին սակագինը 0,2% է:

Գույքի ապահովագրության կանոնները ծավալուն են, մանրակրկիտ նկարագրվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պայմանագրի դադարեցման, ապահովագրական հատուցման, ապահովագրավճարի վճարման, վեճերի լուծման և այլնի կարգն ու պայմանները:

Քանալի բառեր՝ գույքի ապահովագրություն, ապահովադիր, ապահովագրող, ապահովագրավճար, ապահովագրական գումար, սակագին, կանոններ, ապահովագրական ռիսկեր, պատահարներ, չփոխհատուցվող գումար, բացառություններ:

Օգտագործված գրականություն

1. «ՀՀ օրենքը ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»՝ ընդունված 9 ապրիլի, 2007թ.:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 54:
3. www.nairiinsurance.am

PROPERTY INSURANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

A. P. BAGHINYAN

GSU Lecturer

Property insurance is carried out mainly in the form of voluntary insurance. The article describes in detail the basic concepts of insurance company Nairi insurance, the terms of the insurance contract, insurance objects, insurance risks, etc.

СТРАХОВАНИЕ ИМУЩЕСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

А. П. БАГИНЯН

ГГУ Лектор

Страхование имущества осуществляется преимущественно в форме добровольного страхования. В статье подробно описаны основные понятия страхования компании Наيري Иншуранс, условия договора страхования, объекты страхования, страховые риски и т.д.